

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԵԿ» ԲԲԸ Գնումների
գնահատող հանձնաժողովի
2022 թվականի հունիսի 27-ի N 14-3/27.06.22 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության
04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/3-ԴՎ-03/27.06.22**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԵԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային 1
հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով
կառաջարկվի կնքել **4000 լիտր դիզելային վառելիքի** մատակարարման պայմանագիր:

Մատակարարման ժամկետ է սահմանվում **մեկ ամիս՝ պայմանագիրը կնքելու
օրվանից:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ,
անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ
քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման
հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար
գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային
առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԵԿ»ԲԲԸ,
ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով կամ էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԵԿ» ԲԲԸ ք.Հրազդան,
Գործարանային 1 հասցեում, **2022թ. հուլիսի 06-ին ժամը 11⁰⁰ -ին:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու
համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Մարգարյանին,
հեռ.՝ +223 6-07-12:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԵԿ)» ԲԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

1. Սույն հրավերը տրամադրվում է ՀրագՋԷԿ ԲԲԸ կողմից 2022թ. հունիսի 28- ին տեղեկագրում հրապարակված ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/3-ԴՎ-03/27.06.22 ծածկագրով գնման գնանշման հարցման մասին հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/3-ԴՎ-03/27.06.22

3. Գնման առարկայի բնութագիրը՝ 4000 լիտր դիզելային վառելիք

4. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

5. Մրցույթն իրականացվում է 1 փուլով, մատակարարումն՝ ըստ Կողմերի համաձայնեցրած ժամանակացույցի և հայտարարված ժամկետում՝ պայմանագիրը կնքելու օրվանից 1 ամսվա ընթացքում:

6. Հայտով նարկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

7. Հայտով նարկայացվող առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը ՀրագՋԷԿ-ի տարածք:

8. Հայտերը կբացվեն 2022թ. հուլիսի 06-ին ժամը 11⁰⁰-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության, հասցեն՝ ք. Հրագդան, 2302, Գործարանային 1:

9. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ 526 -Ն որոշման դրույթներով:

10. Պայամանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝



Է.Սանամյան